2. ԱՍԻԱԿԱՆ - ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

2.1. ԹԱՅՎԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ
04.08.2021-10.09.2021

Ներածություն: Թայվանը (Չինական Հանրապետություն) աշխարհագրորեն տեղակայված է Խաղաղ օվկիանոսի արևմտյան հատվածում՝ Ճապոնիային և Ֆիլիպիններին կից: Տարածքը 36197 քկմ է, բնակչությունը՝ 23,6 մլն՝ ըստ 2019 թ. տվյալների: Բնակչությունը հիմնականում մոնոէթնիկ է. 95,4 %-ը չինացիներ են[1]:

1960-ականների սկզբից ընդհուպ մինչև 1990-ականների ասիական տնտեսական ճգնաժամը Թայվանը համարվում էր «ասիական 4 վիշապներից» մեկը, որը տվյալ ժամանակահատվածում աննախադեպ տնտեսական թռիչք էր արձանագրել: Տնտեսական զարգացման նման ընթացքը հաճախ մասնագետները բնորոշում են որպես «տնտեսական հրաշք», սակայն Սինիկայի ակադեմիայի անդամ Յույ Ցզուն-սյանը մեկնաբանում է տվյալ երևույթը որպես կառավարության կողմից վարվող մտածված քաղաքականության արդյունք, որն ուղղված էր մասնավոր ձեռներեցության զարգացմանը[2]: Հարկ է նշել, որ տնտեսական թռիչքաձև աճի շրջանում Թայվանում դեռևս գործել է 1949 թվականից հայտարարված ռազմական դրությունը, որը չեղարկվել է միայն 1989 թ.: Ստացվում է, որ տնտեսական լրջագույն հաջողությունները Թայվանում գրանցվել են քաղաքական և ռազմական առումով բավական լարված իրավիճակում: Ուստի դիտարկելով Թայվանի տնտեսության զարգացումը 1960-ականներից մինչ օրս՝ կարող ենք փաստել, որ զարգացման բոլոր ժամանակահատվածներում Թայվանի տնտեսական քաղաքականությունը հստակ դասեր և պատգամներ է թողել զարգացող երկրների, մասնավորապես՝ Հայաստանի համար:

Հոդվածի նպատակն է՝ վեր հանել Թայվանի տնտեսության այն դասերը, որոնք կարող են ուսանելի լինել ՀՀ տնտեսության արագընթաց աճի համար: Այդ նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են մի շարք խնդիրներ՝ ուսումնասիրել և համադրել Թայվանի և Հայաստանի տնտեսությունների նմանություններն ու տարբերությունները, վերլուծել Թայվանի տնտեսական աճին նպաստող գործոնները և համեմատել դրանք ՀՀ-ում առկա գործոնների

---

[1] Министерство иностранных дел Китайской Республики (Тайвань), Знакомьтесь: ТАЙВАНЬ 2020-2021, 2021, стр. 2, 10.

[2] https://taipanorama.tw/print.php?post=109193&unit=388 վերջին մուտքը՝ 07.08.2021

հետ, քննարկել տնտեսական աճի ապահովման տարբեր ժամանակահատվածներում Թայվանի կողմից վարվող քաղաքականության գործիքակազմը, ներկայացնել այդ գործիքակազմի այն շղթաները, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում:

Թայվանի տնտեսական քաղաքականությունը ուսանելի օրինակ է բազմաթիվ զարգացող երկրների համար: Այդ պատճառով էլ այն վերլուծվել է տարբեր ձևաչափերով՝ սկսած ուսումնական ձեռնարկներից մինչև գիտական խոր վերլուծություններ: Մասնավորապես՝ Թայվանի տնտեսական աճի վերլուծությանն են անդրադարձել Վ. Շիրլին, Ջ. Գելբրեյթը, Պ. Չանգը, Ա. Գրանովսկին, Լ. Ֆրիդմանը և ուրիշներ:

Գրականության վերլուծություն: Թայվանի «տնտեսական հրաշքի» վերլուծությունը տարիներ շարունակ գրավել է տնտեսագետների ուշադրությունը: Մասնավորապես՝ Չեն Ցզյա-վեյը Թայվանի տնտեսության առաջանցիկ աճը կապում է ամերիկյան և ճապոնական ակտիվ ներդրումների հետ, որոնց ներհոսքը, ըստ վերլուծաբանի, պայմանավորված էր էժան հումքի և աշխատուժի առկայությամբ: Հեղինակը պնդում է, որ Թայվանում օտարերկրյա ներդրումների մեծ ծավալը նպաստեց արդյունաբերության աճին, որն էլ իր հերթին հանգեցրեց հասարակության բարեկեցության աճին, կրթական ցենզի բարձրացմանը և ի վերջո՝ քաղաքացիական հասարակության ձևավորմանը[1]:

Ռուս տնտեսագետ Մ. Իվանովը պնդում է, որ Թայվանը հասել է ներկայիս տնտեսական զարգացմանը, քանի որ մեծ ուշադրություն է դարձրել արտաքին շուկաներում տեղական արտադրողների պաշտպանության հիմնախնդիրներին և մեծ տեմպով զարգացրել է արտահանումը: Հեղինակի պնդմամբ՝ Թայվանի կառավարությունը մշտապես վարել է արտաքին տնտեսական ճկուն քաղաքականություն՝ օգնելով տեղական արտադրողին մրցակցային առավելություններ ստանալու միջազգային շուկաներում[2]:

Որոշ հեղինակներ Թայվանի տնտեսական հաջողությունները փորձում են բացատրել վարքաբանական տնտեսագիտության տեսանկյունից՝ պնդելով, որ տնտեսական ձեռքբերումների արմատները գտնվում են բնակչության հոգեբանական և մշակութային առանձնահատկություններում: Մասնավորապես՝ Կ. Սոլոնինը պնդում է, որ դրան նպաստել են հիմնականում 4 առանձնահատկություն[3]՝ չինացիների մեծ մասը պատրաստակամորեն զիջել

---

[1] Чэнь Цзя-вэй., Демократическая прогрессивная партия Тайваня и поставторитарная модернизация. Гл. 1. Рекомендовано к публикации Диссертационным советом Д 501.001.27 при МГУ имени М. В. Ломоносова 24 марта 2016 г., https://libs.ru/book/449831/ վերջին մուտքը՝ 08.08.2021 թ.

[2] Иванов М., Экономическая политика государства на Тайване: 1949-2000 гг.. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук, https://www.dissercat.com/content/ekonomicheskaya-politika-gosudarstva-na-taivane-1949-2000-gg/read

[3] Солонин К., Социальные «портреты» технологических предпринимателей на фоне инновационной экосистемы региона: СЛУЧАЙ ТАЙВАНЯ, Центр исследований науки и техники ЕУСПб, 2012, стр. 11.

է քաղաքական ազատությունը, որպեսզի փոխարենը ստանա արագ հարստանալու հնարավորություն. չինացիների մեծ մասին, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչներին հատուկ է «ղեկավար» լինելու ցանկությունը. չինացիները պատրաստ են տակտիկական զոհողությունների դիմել՝ պայմանով, որ ապահովված լինեն կայուն եկամտով երկարաժամկետ ժամանակահատվածում. հասարակությունում հեղինակություն վայելելու ձգտումը չինացիների շրջանում ձևավորել է իրենց վարքաբանա-հոգեբանական կերտվածքին բնորոշ գիծ՝ գիտակցված ռիսկի դիմելը:

Մեկ այլ հեղինակ[1] պնդում է, որ Թայվանը պատմականորեն ոչ երկար ժամանակահատվածում ավտորիտարից դարձել է զարգացած տնտեսությամբ ժողովրդավարական պետություն: Հեղինակը գտնում է, որ նման զարգացում կարողացել է ապահովել Թայվանի կառավարական էլիտան, որը բաղկացած էր բարձր կրթական ցենզ, պատասխանատվության մեծ աստիճան ունեցող հայրենանվեր անձանցից, ովքեր կառուցել են երազանքների երկիրը՝ հիմնվելով ԱՄՆ-ի փորձի վրա: Որոշ վերլուծաբաններ էլ պնդում են, որ Թայվանի տնտեսական հրաշքն ավարտվել է 1980-ականներին[2], որից հետո տեղի ունեցող մակրոտնտեսական և արտաքին քաղաքատնտեսական փոփոխությունները ստիպեցին Թայվանի ղեկավարությանը ձեռնամուխ լինել տնտեսության վերակառուցմանը: Հեղինակները դրա հիմնական պատճառ են համարում ԱՄՆ-ի և Չինաստանի միջև քաղաքատնտեսական հարաբերությունների փոփոխությունը, ինչպես նաև Թայվանի և Չինաստանի միջև ստեղծվող տնտեսական գոտին:

Այդուհանդերձ, այս վերլուծությունները լրացնելու են գալիս տնտեսագետների այն խմբի գաղափարները, որոնք պնդում են, որ Թայվանի տնտեսական աճը շարունակվում է, և բաժանում են Թայվանի տնտեսության զարգացումը 3 փուլի[3]՝ 1. 1952-1980-ականներ, երբ արձանագրվեց ամենամեծ աճի տեմպը՝ շնորհիվ գյուղատնտեսության և արդյունաբերության առաջանցիկ աճի, 2. 1981-1999 թթ., երբ տնտեսության աճի տեմպը դանդաղեց արտաքին տնտեսական և մակրոտնտեսական փոփոխությունների պատճառով, տնտեսական աճը հիմնականում արդյունաբերության ոլորտից տեղափոխվում էր ծառայությունների ոլորտ և 3. 2000 թ. մինչ օրս, երբ Թայվանի տնտեսությունը թևակոխեց տնտեսական կայուն աճի ժամանակաշրջան:

---

[1] Полякова Т., Эволюция фактора Тайваня в отношениях между США И КНР. Аналитические доклады (является приложением к периодическому изданию «Ежегодник ИМИ»), Институт международных исследований МГИМО (У) МИД России. Выпуск 3 (42), июнь, 2014, стр. 26.

[2] Chevalérias Ph., The Taiwanese Economy After the Miracle, An Industr y in Restructurati on, Structural Weaknesses and the Challenge o f China, China Perspectives 2010/3 | 2010 Taiwan: The Consolidation of a Democratic and Distinct Society, p.35-44, https://journals.openedition.org/chinaperspectives/5301

[3] https://cyberleninka.ru/article/n/osnovnye-etapy-modernizatsii-ekonomiki-tayvanya-problemy-i-dostizheniya/viewer

Թերևս Թայվանի տնտեսական հրաշքի ֆենոմենի գրականության վերլուծությունը կարելի է ամփոփել Պ. Մոզիասի եզրահանգմամբ[1], որում հեղինակը պնդում է, որ ներկայում միամտություն կլինի ակնկալել, որ Թայվանի տնտեսությունը կրկին կաճի «տնտեսական հրաշքին» բնորոշ ժամանակահատվածի տեմպերով, քանի որ զարգացած տնտեսությունը աճում է ավելի փոքր տեմպով, քան նոր զարգացողը: Այդուհանդերձ, հեղինակը մեկնաբանում է, որ «տնտեսական հրաշքի» ժամանակահատվածը Թայվանում բնորոշ է եղել միանգամայն այլ՝ վարչահրամայական տնտեսակարգի, որը ներկայում այլևս գոյություն չունի և գոյություն ունենալու պարագայում այլևս չէր կարող ապահովել Թայվանի տնտեսության զարգացումը: Ուստի այժմ Թայվանի կառավարության կարևորագույն նպատակներից պետք է լինի հաջողությամբ ավարտին հասցնել տնտեսության ազատականացման փուլը, որը հետագայում ևս կապահովի կայուն տնտեսական աճ:

Մեթոդաբանություն: Հոդվածի համար տեսա-մեթոդական հիմք են հանդիսացել տարբեր վերլուծաբանների եզրահանգումները: Հոդվածի վերլուծության համար կիրառվել են տվյալների հավաքագրման, համադրման և վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, ինչպես նաև էկոնոմետրիկ վերլուծության մեթոդները: Հաշվի առնելով Թայվանի կարգավիճակը միջազգային իրավունքի տեսանկյունից՝ Համաշխարհային բանկը չի ներկայացնում վիճակագրական տվյալներ Թայվանի վերաբերյալ: Այդ պատճառով Թայվանի վիճակագրական տվյալները հավաքագրվել են Թայվանի վիճակագրական բյուրոյի[2] և Արտաքին գործերի նախարարության[3] կայքերից, իսկ Հայաստանին վերաբերող տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքից[4]: Համադրման եղանակով վերլուծվել են Թայվանի զարգացման սկզբնական ժամանակահատվածի և ՀՀ ներկայիս նմանություններն ու տարբերությունները՝ հասկանալու, թե որքանով հնարավոր կլինի Թայվանում կիրառված տնտեսական քաղաքականության գործիքակազմը կիրառել Հայաստանում: Ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդով մշակվել են ՀՀ-ի համար ներկայացվող առաջարկները:

Վերլուծություն: Թայվանը թեպետ հանդիսանում է Հարավարևելյան Ասիայի աննախադեպ զարգացում արձանագրած երկրներից մեկը, այդուհանդերձ այն մինչ օրս միջազգային իրավունքի տեսանկյունից ճանաչված չէ որպես առանձին երկիր: Թայվանի տնտեսության մերօրյա զարգացման վրա իր դրոշմն է դրել նրա անցած պատմական ուղին, երբ երկիրը գտնվել է տարբեր երկրների և կայսրությունների տիրապետության ներքո: Առկա մատենագրությունների համաձայն՝ 16-րդ դարում եվրոպացի ծովագնացները,

[1] https://cyberleninka.ru/article/n/tayvan-ekonomicheskie-itogi-prezidentstva-chen-shuybyanya/viewer
[2] https://eng.stat.gov.tw/mp.asp?mp=5
[3] Ministry of Foreign Affairs, Republic of China (Taiwan) (mofa.gov.tw)
[4] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am)

անցնելով Թայվանի ափերով, այն անվանում են Ilha Formosa, որը թարգմանաբար նշանակում է հիասքանչ կղզի[1]: 17-րդ դարասկզբին կղզում հիմնավորվել են հոլանդացիներ, իսպանացիներ, սակայն 17-րդ դարի վերջերից այն անցել է Չինական կայսրության տիրապետության ներքո մինչև 1894-189 5թթ. ճապոնա-չինական պատերազմի ավարտը, որից հետո Թայվանը գտնվել է Ճապոնական կայսրության տիրապետության ներքո մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Թայվանի տնտեսության հետագա զարգացման հիմնաքարերը դրվել են Ճապոնական կայսրության տիրապետության ներքո գտնված ժամանակահատվածում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թայվանը կրկին անցավ Չինաստանի վերահսկողության տակ, և սկսվեց Թայվանի թռիչքաձև աճի ժամանակահատվածը՝ 1952-1980-ականներ:

Արդեն իսկ նշել ենք, որ որոշ տնտեսագետներ Թայվանի տնտեսական զարգացումը պայմանականորեն բաժանում են 3 փուլի՝ 1. 1952-1980 թթ., 2. 1981-1999 թթ., 3. 2000-ականներից մինչ օրս, ուստի հետագա վերլուծությունը ևս կիրականացնենք համապատասխան փուլերում իրականացված տնտեսական քաղաքականության քննարկման համատեքստում: 1952-1980 թթ. Թայվանի տնտեսությունն աճում էր միջինում 18,3 %-ով[2] (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *Թայվանի տնտեսական աճը 1952-2020 թթ.,* %

Գծապատկերից ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածում տնտեսությունը գրեթե միշտ արձանագրել է երկնիշ տնտեսական աճ:

Գծապատկեր 2-ից ակնհայտ է, որ գյուղատնտեսության զարգացումը տևել է 1951-1962 թթ., որից հետո կառավարության կողմից շեշտադրվել է արդյունաբերության զարգացումը, և ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսության տեսակարար կշիռը նվազել է հօգուտ արդյունաբերության տեսակարար կշռի ավելացման: Դիտարկվող ժամանակահատվածում Թայվանը հիմ-

[1] Министерство иностранных дел Китайской Республики (Тайвань), Знакомьтесь: ТАЙВАНЬ 2020-2021, 2021, стр. 11.

[2] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ https://eng.stat.gov.tw/ct.asp?xItem=37408&CtNode=5347&mp=5 պաշտոնական տվյալների

նականում զարգացել է նախապես մշակված քառամյա զարգացման պլանների հիման վրա։



Գծապատկեր 2. *Թայվանի ՀՆԱ-ի կառուցվածքը 1951-1980 թթ.,* %

1957-1960 թթ. իրագործվեց ներմուծմանը փոխարինող արդյունաբերության զարգացման պլանը[1], որի արդյունքներն արդեն իսկ ակնհայտ էին 1962 թվականից։ 1961-1964 թթ. ժամանակահատվածը բնորոշվում է որպես աշխատատար արդյունաբերության արտահանման խթանման ժամանակահատված։ Համաձայն գծապատկեր 2-ի՝ այդ ժամանակահատվածում Թայվանի արդյունաբերության աճը համեմատաբար դանդաղ է տեղի ունեցել։ 1969-1972 թթ. Թայվանի կառավարությունը ստանձնեց կապիտալատար արդյունաբերության արտահանման խթանման քաղաքականությունը։ Մեր կողմից իրականացվել է նաև էկոնոմետրիկ վերլուծություն՝ պարզելու համար, թե արդյունաբերության խթանման որ քաղաքականությունը որքանով է նպաստում Թայվանի ՀՆԱ-ի աճին։ Ըստ այդմ՝ առանձին ռեգրեսիոն վերլուծություն ենք իրականացրել 1951-1964 թթ. և 1965-1981 թթ. եռամսյակային տվյալների հիման վրա։ Արդյունքում ստացվել է, որ 1951-1964 թթ. աշխատատար արդյունաբերության խթանման ժամանակահատվածում արդյունաբերության 1 միավորը աճը նպաստում էր Թայվանի ՀՆԱ-ի աճին 1,93 միավորով, իսկ կապիտալատար արդյունաբերության խթանման ժամանակահատվածում՝ 2 միավորով։

Թայվանի տնտեսության զարգացման նման ընթացքը հիմնված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների վրա։ Մասնավորապես՝ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Թայվանի տնտեսությունում արդեն իսկ Ճապոնական կայսրության կողմից դրվել էին գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման որոշակի հիմքեր, որոնք նպաստեցին պատերազմից հետո քայքայված տնտեսության առավել արագ վերականգնմանը։ Բացի այդ, 1949 թ. քաղաքացիական պատերազմի անցանկալի արդյունքի

[1] https://cyberleninka.ru/article/n/osnovnye-etapy-modernizatsii-ekonomiki-tayvanya-problemy-i-dostizheniya/viewer

պատճառով Չինաստանի կառավարությունը և ինտելեկտուալ ու արդյունաբերական էլիտայի որոշակի մասը տեղափոխվեցին Թայվան՝ մշտական բնակության, ինչի արդյունքում Թայվանում արդեն իսկ առկա էր զարգացման մեկնարկի համար անհրաժեշտ մարդկային կապիտալը: Հարկ է նշել նաև զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների մասին, որը Թայվանը ստացավ ԱՄՆ-ից՝ ֆինանսական օգնության և արտոնյալ վարկերի տեսքով:

Թայվանի տնտեսության զարգացման 1-ին փուլի ձեռքբերումներն ու գործիքակազմը ներկայացված են ստորև:

- Պետությունն իրականացնում էր ներմուծման փոխարինման քաղաքականություն՝ ստեղծելով արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպիսիք են «Թայվանի տեքստիլի գործարանը», «Ֆորմոզա պլաստիկը», «Թայվանցեմենտը» և այլն:
- Պետությունը ներդրումների ներհոսքի խթանման քաղաքականություն էր իրականացնում՝ օրենսդրորեն ամրագրելով թիրախային ոլորտներում կատարվող ներդրումներին տրվող արտոնությունները: Այս քաղաքականության շրջանակներում ընդունվեց «Ներդրումների խթանման օրենքը» (The Statute for the Encouragement of Investment), ինչպես նաև հատուկ օրենք՝ ուղղված չինական սփյուռքից ներդրումների ներհոսքի խրախուսմանը:
- Զուգահեռաբար հիմք էր դրվում նաև արտահանող ոլորտների արդյունաբերության զարգացման համար՝ ազատ տնտեսական գոտիների ստեղծմամբ (օրինակ՝ Գաոյունի, Նանցիի և Թայչժունեի արտահանման արդյունաբերական շրջանը) և արժութային կոշտ կարգավորման քաղաքականությամբ:
- Իրականացվում էր տնտեսությունում ՓՄՁ ստեղծմանն ու խթանմանն ուղղված քաղաքականություն՝ օրենսդրորեն խրախուսելով յուրաքանչյուր ընտանիքին կից արտադրության ստեղծումը:
- Հատուկ ուշադրություն էր դարձվում գիտության զարգացմանը՝ արտոնություններ տրամադրելով այն գիտահետազոտական կազմակերպություններին, որոնց կողմից իրականացված մշակումները հնարավոր էր կիրառել տնտեսության մեջ: Գիտությանը տրամադրվող բազային ֆինանսավորման նվազագույն չափը հաստատվում էր օրենսդրորեն՝ զգալիորեն ավելանալով յուրաքանչյուր հաջորդ տարվա համար: Այս տեսանկյունից հատկանշական է, որ գիտահետազոտական ինստիտուտները ֆինանսավորվում էին ոչ միայն պետության կողմից տրամադրվող բազային ֆինանսավորմամբ, այլև տարբեր նախարարությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության վերլուծական ծրագրեր իրականացնելով:

Թայվանի տնտեսության զարգացման 2-րդ փուլում՝ 1981-1999 թթ., տնտեսությունն աճում էր ավելի դանդաղ տեմպերով: Սա, ըստ էության,

բնականոն երևույթ է, քանի որ զարգացման որոշակի մակարդակի հասնելուց հետո աճի տեմպը դանդաղում է: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի միջին աճը կազմել է 10 %, այդուհանդերձ այս փուլի գրեթե կեսը բնորոշվում է միանիշ տնտեսական աճով (գծապատկեր 1):

Այս փուլում, թերևս, Թայվանի կառավարությունը զարկ է տվել ծառայությունների ոլորտի զարգացմանը՝ հատկապես շեշտադրելով թվային տեխնոլոգիաների զարգացումը: Դիտարկվող ժամանակահատվածում Թայվանի ՀՆԱ-ի կառուցվածքը փոխվել է հօգուտ ծառայությունների ոլորտի մասնաբաժնի ավելացման (գծապատկեր 2):

1990-ականներից Թայվանում մեծ ծավալով սկսվեց պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացը, որը նպաստեց մեծ չափով օտարերկրյա ներդրումների ներհոսքի: Շնորհիվ վարվող պետական քաղաքականության՝ արդեն 1996 թ. Թայվանի արտահանման մոտ 40 %-ը[1] կազմում էր բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը, ինչպիսիք են մեքենաշինությունը, էլեկտրոնիկան, տեղեկատվական և հեռահաղորդակցության ապրանքները: Թեպետ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության հիմնասյուները դրվել են շատ ավելի վաղ շրջանում, այդուհանդերձ այն մեծ տեմպերով սկսեց զարգանալ հենց այս փուլում, երբ դրվեց տեխնոպարկերի ստեղծման հիմքը: Համաձայն այս ժամանակահատվածում Թայվանում վարվող պետական քաղաքականության՝ երկրի զարգացումը տեղի էր ունենում ըստ տարածաշրջանների: Այս ընթացքում տեխնոպարկերը հիմնվում էին հիմնականում երկրի հյուսիսում՝ Սինչժու տեխնոպարկը, որը հիմնադրվել է 1980թ.[2], և հարավում՝ Թայնան և Կաոսյունգ տեխնոպարկերը, որոնք հիմնադրվել են 1991 թվականից սկսած[3]:

Թայվանի տնտեսության այս փուլի զարգացումը ևս հիմնված էր մի քանի գործոնների վրա: Նախ և առաջ դիտարկվող ժամանակահատվածի սկզբում Թայվանի նախագահն էր Ցզյան Ցզինգոն, որը ժամանակին անմիջականորեն մասնակցել էր Սովետական Միության արդյունաբերականացման գործընթացին և կարողացավ մշակել նաև Թայվանի արդյունաբերականացմանն ուղղված քաղաքականությունը: Բացի այդ, 1970-ականների նավթային ճգնաժամը ստիպեց կառավարությանը տնտեսական աճի նոր մոդելը փնտրել և փոխարինել զարգացման ավանդական ուղղությունները նորերով: Այս փուլում Թայվանի տնտեսության զարգացման մոդելի վրա ազդող զգալի գործոն կարելի է համարել նաև ԱՄՆ-ի և Չինաստանի միջև լարված հարաբերությունների առկայությունը, երբ ամեն րոպե հնարավոր էր ամերիկյան զինված ուժերի հարձակում: Այս հանգամանքը նպաստեց, որպեսզի Թայվանում

[1] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ https://eng.stat.gov.tw/ct.asp?xItem=37408&CtNode=5347&mp=5 պաշտոնական տվյալների

[2] https://web.sipa.gov.tw/english/ParkBureauIntroduction

[3] https://www.stsp.gov.tw/web/WEB/Jsp/Page/cindex.jsp?frontTarget=ENGLISH&thisRootID=3

տնտեսության զարգացման թիրախային ուղղություններից հանդիսանա նաև ռազմարդյունաբերությունը:

Թայվանի տնտեսության զարգացման 2-րդ փուլի ձեռքբերումներն ու գործիքակազմը ներկայացված են ստորև:

- Այս փուլում պետությունը ներմուծման փոխարինման քաղաքականության փոխարեն թիրախավորում էր ծանր արդյունաբերության ստեղծման քաղաքականությունը՝ հարկային և այլ բնույթի արտոնություններ տրամադրելով ռազմարդյունաբերության և ծանր արդյունաբերության այլ ոլորտների:
- Պետությունն իրականացնում էր տնտեսության տեխնոլոգիական արդիականացում՝ արտոնություններ տրամադրելով արդյունաբերության արագացված վերազինման, ինչպես նաև տնտեսության առաջնահերթ ճյուղերին առնչվող գիտահետազոտական մշակումների համար:
- Իրականացվում էր նաև տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխում՝ զգալի աջակցություն տրամադրելով նոր և հեռանկարային ճյուղերի ստեղծման և զարգացման բոլոր օղակներին՝ սկսած մասնագիտական կրթությունից մինչև ՕՌԻՆ ներգրավում:
- Տեղի էր ունենում տնտեսության մեջ օտարերկրյա բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունների ներգրավում՝ տնտեսության ազատականացման միջոցով:
- Իրականացվում էին կրթական բարեփոխումներ՝ 9-ամյա կրթությունը դարձնելով պարտադիր, երկարաձգելով կրթական կիսամյակը մինչև 18 ամիս, բարձրացնելով առաջատար բուհեր ընդունվելու համար անհրաժեշտ գիտելիքի շեմը դպրոցական ծրագրով ստացած գիտելիքից:

Անդրադառնալով Թայվանի տնտեսության զարգացման 3-րդ փուլին՝ 2000-2020 թթ.՝ պետք է նշել, որ այս ժամանակահատվածում Թայվանի տնտեսությունն աճել է առավել ցածր տեմպերով՝ միջինում 3 %[1]: Տնտեսության զարգացման այս փուլը բնորոշվում է ՀՆԱ–ի կառուցվածքում գյուղատնտեսության տեսակարար կշռի նվազմամբ, որը դիտարկվող ժամանակահատվածում եղել է նվազ քան 2 %՝ հօգուտ ծառայությունների ոլորտի մասնաբաժնի աճի (գծապատկեր 2): Այս ժամանակահատվածում իրականացվեց նաև տնտեսության կենտրոնական հատվածի զարգացմանը միտված քաղաքականությունը, և տեխնոպարկեր հիմնվեցին նաև երկրի կենտրոնական հատվածներում, որտեղ նախկինում հիմնականում զարգանում էր գյուղատնտեսությունը: 2002 թ. հաստատվեց հերթական 6-ամյա պլանը, որն անվանվել է «2008 թ. մարտահրավերները»[2]:

---

[1] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ https://eng.stat.gov.tw/ct.asp?xItem=37408&CtNode=5347&mp=5 պաշտոնական տվյալների

[2] https://cyberleninka.ru/article/n/osnovnye-etapy-modernizatsii-ekonomiki-tayvanya-problemy-i-dostizheniya/viewer

Թերևս ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Թայվանը ներդրեց բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված տնտեսության զարգացմանը և համաշխարհային տարբեր դասակարգման աղյուսակներում առաջատար դիրքեր գրավելուն: Արդյունքում 2021 թ. դրությամբ Թայվանը մրցունակության ինդեքսով աշխարհում 8-րդն է, իսկ Ասիայում՝ 3-րդը[1]:

Թայվանի տնտեսության զարգացման այս փուլի վրա իրենց դրոշմն են դրել մի քանի աշխարհաքաղաքական և տեղային բնույթի գործոններ: 1990-ականներին Թայվանի տնտեսական աճի տեմպերը զգալիորեն դանդաղեցին, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ նոր դերակատարություն ստանձնեց Չինաստանը՝ առաջարկելով գրեթե նույն պայմանները, որոնցով Թայվանը մեկնարկեց տնտեսական թռիչքաձև աճի փուլը: Այս տեսանկյունից Թայվանը ստիպված էր հրաժարվել աշխատատար ոլորտների արտադրությունից, քանի որ չէր կարող մրցակցել չինական էժան և անհամեմատ մեծ քանակի աշխատուժի հետ: 2000-ականների սկզբում փոխվեց Թայվանի իշխող կուսակցությունը, որը ղեկավարում էր 1945 թվականից: Թեպետ նոր կուսակցությունը ևս հետևում էր նախկինի մշակած զարգացման կուրսին, այդուհանդերձ փոխվեցին զարգացման թիրախավորված մասշտաբները՝ նախկին ասիական մակարդակի փոխարեն այժմ թիրախավորվեց համաշխարհային մակարդակում բարձր տեխնոլոգիաներով հայտնի երկիր դառնալու գաղափարը:

Թայվանի տնտեսության զարգացման 3-րդ փուլի ձեռքբերումներն ու գործիքակազմը ներկայացված են ստորև:

- Թիրախավորվեց ազգային գիտատեխնիկական և նորարարական համակարգի ստեղծումը՝ տարածաշրջանային գիտահետազոտական կենտրոնի ստեղծմամբ, որը նպաստեց լավագույն գիտնականների ներհոսքին, գիտահետազոտական մշակումներին լրացուցիչ հատկացումների չափի՝ համապատասխան ոլորտի վաճառքի և ձեռքբերումների հետ համապատասխանեցմամբ: Վերջինի դեպքում խոսքը վերաբերում է արտադրական ձեռնարկություններին կից ստեղծվող գիտահետազոտական կենտրոնների ֆինանսավորմանը, որոնց արտոնություն տրամադրվում էր, եթե ձեռնարկությունը կարողանում էր ավելացնել վաճառքը և հատկապես՝ արտահանումը:
- Ներդրվեց գիտության զարգացման օրենսդրական հիմքը՝ համակարգելով գիտության զարգացման հիմնական ուղղություններն ու սկզբունքները՝ ըստ տարիների:
- 2001 թ. կառավարությունը հաստատեց գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու մասին ծրագիրը՝ թիրախավորելով 10 տարվա համար հետազոտական աշխատանքներին տրամադրվող գումարի և ՀՆԱ-ում գիտելի-

[1] https://worldcompetitiveness.imd.org/rankings/wcy

քատար արտադրության սահմանաչափերը: Այս համատեքստում բնակարանի վարձակալության և այլ արտոնություններ են տրամադրվում գիտնականներին՝ խթանելով նրանցից լավագույնների ներհոսքը Թայվան:

Այսպիսով՝ ամփոփելով Թայվանի տնտեսության զարգացման պայմանական 3 փուլերի վերլուծությունը՝ կարող ենք նշել այն հիմնական գործոնները, որոնք նպաստել են տնտեսության թռիչքաձև զարգացմանը՝ 1. կրթության բարեփոխումներ, 2. գիտության արդյունավետ կառավարում, 3. նորարարական տնտեսության զարգացում, 4. սկզբնական շրջանում ներմուծման փոխարինման, ապա արտահանման խթանման քաղաքականության իրականացում, 5. ներդրումների ներգրավման խրախուսում՝ հատկապես հիմնված սփյուռքի ներդրումների վրա:

Այս 5 հիմնասյուներն էլ, կարծում ենք, պետք է ներդրված լինեն ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի հիմքում:

Եզրակացություն: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Հայաստանի և Թայվանի տնտեսությունները նմանություններ գրեթե չունեն, մինչդեռ խորքային վերլուծությունն ապացուցում է ճիշտ հակառակը: Թայվանի տնտեսությունը արագընթաց աճ գրանցելուց առաջ զգալիորեն տուժել էր պատերազմից: ՀՀ տնտեսությունը ներկայում գտնվում է հենց այդ նախնական փուլում: Թայվանը տարածքով փոքր է, ինչպես և Հայաստանը, և արագընթաց աճի ողջ ժամանակահատվածում գտնվել է 2 գերտերությունների՝ ԱՄՆ-ի և Չինաստանի հակասությունների թատերաբեմում, ինչպես և Հայաստանը՝ Ռուսաստանի և Թուրքիայի: Թայվանի և Հայաստանի բնակչությունը հիմնականում մոնոէթնիկ է: Թայվանի տնտեսությունը զարգացման սկզբնական փուլում ուներ պարենային ապահովման խնդիր, քանի որ, բացի երկրի հիմնական բնակչությունից, երկիր էին ներգաղթել նաև մեծ թվով չինացիներ՝ քաղաքացիական պատերազմի արդյունքում: Նմանատիպ իրավիճակ է նաև Հայաստանում, որտեղ Արցախից ներգաղթի արդյունքում աստիճանաբար սրվում է պարենային խնդիրը:

Թերևս Թայվանի կարևորագույն դասերից կարող ենք համարել տասնամյակներ շարունակ ռազմական դրության պահպանմանը զուգահեռ առաջանցիկ աճի ապահովումը: Բացի այդ, հատկանշական է նաև տնտեսության զարգացումը՝ հիմնված սովետական կրթական համակարգի արդիականացված մոդելի վրա, ինչպես նաև զարգացման առաջին իսկ օրից գիտության և նորարարությունների դերի հստակ գիտակցումը և դրանց արդյունավետ զարգացումը:

ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի «կրթություն» հենասյան զարգացումը

Թեպետ արդի ժամանակահատվածում մենք զգալիորեն հեռացել ենք նախկին ավանդական կրթական համակարգից, այդուհանդերձ Թայվանի փորձը ցույց է տալիս, որ Թայվանում կրթության ոլորտի հաջողությունները

թաքնված են հենց սովետական կրթական համակարգի մոդելով ոլորտի կառավարման մեջ: Սա, ըստ էության, Թայվանի ամենակարևոր դասերից մեկն է նախկին սովետական երկրներին, մասնավորապես՝ Հայաստանին, որոնք սովետական հաջողված փորձը պահպանելու և այն արդիականացնելու փոխարեն գնացին այն քանդելու և նոր արհեստական մոդելի ներդրման ճանապարհով: Այս ամենի արդյունքում արդեն 2021 թ. բուհի դիմորդների գրեթե կեսը մայրենի լեզվի քննության նվազագույն շեմը չի հաղթահարել: Երևույթի շարունակականության պարագայում բավական մոտ ապագայում մենք կունենանք ցավալի պատկեր: Ուստի օր առաջ պետք է սկսվեն կրթական ոլորտի բարեփոխումները, որոնց արդյունքները հնարավոր կլինի տեսնել մոտ 10 տարի հետո: Այս տեսանկյունից բարեփոխումներ անհրաժեշտ են ոչ միայն կրթական ծրագրերի, այլև ոլորտի կառավարման մոդելի համատեքստում: Ներկայում կրթական հաստատությունը ֆինանսավորվում է աշակերտի/ուսանողի թվաքանակի հիման վրա, ուստի այդ թվաքանակի նվազումը (անբավարար գիտելիքներ ունեցող աշակերտի/ուսանողի հեռացումը) ազդում է կրթական հաստատության, այդ թվում և՝ գնահատող ուսուցչի/դասախոսի առանց այդ էլ ցածր ֆինանսավորման վրա: Ուստի գնահատողը կաշկանդված է այս մեխանիզմով: Այս խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք ՀՀ-ում տեղայնացնել Թայվանի փորձը, որն, ըստ էության, սովետական մոդելի արդիականացված տարբերակն է: Ըստ այդմ՝ կարծում ենք, որ կրթական հաստատության ֆինանսավորումը պետք է կապակցված լինի սովորողների թվին, սակայն չնվազի նրանց նվազման պարագայում: Բացի այդ, առաջարկում ենք հանրապետական և այլ մրցույթներում և օլիմպիադաներում հաղթող աշակերտի/ուսանողի համապատասխան կրթական հաստատությանը տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում՝ որպես խրախուսում:

Հաջորդ համակարգային բարեփոխումը կրթական ոլորտում, կարծում ենք, պետք է հանդիսանա աշակերտական նստարանից նորարարական մտածելակերպի ներդրումը: Կարծում ենք՝ այս խնդրի լավագույն լուծումը կլինի «Արմաթ» կամ նմանատիպ այլ ինժեներական լաբորատորիաների ցանցի ներդրումը ողջ հանրակրթական համակարգում:

Կա մեկ այլ կարևոր խնդիր ևս, որ դեռևս լուծում չի ստացել Հայաստանի անկախության երեսնամյա ժամանակահատվածում: Ամեն տարի պետության կողմից բուհական համակարգում ներկայացվում է բոլոր մասնագիտությունների գծով ընդունելության պետպատվերով տեղերի որոշակի քանակ, որը, սակայն, կրում է հիպոթետիկ բնույթ և չունի որևէ հիմնավորում: Աշխարհի բազմաթիվ երկրներ, այդ թվում և Թայվանը, ներկայում իրականացնում են մասնագետների պահանջարկի գնահատում առաջիկա 5-10 տարիների համար, որի հիման վրա էլ բաշխում են բուհական և միջին մասնագիտական կրթության համակարգում պետական պատվերով տարբեր մասնագիտություններին հատկացվող տեղերի քանակը: Թայվանում մասնա-

գիտական պահանջարկի գնահատման համար հիմք են հանդիսանում պետության կողմից առաջիկա տարիների համար պլանավորվող թիրախային քաղաքականությունը և կազմակերպությունների շրջանում իրականացված հարցումները։ Թերևս այս մոդելը անհրաժեշտ է ներդնել Հայաստանում՝ հաշվարկելով յուրաքանչյուր ոլորտի մասնագետների պահանջարկը և հիմնավորելով, թե այդ մասնագետներից որոնց համար է հարկավոր մշակել կամ արդիականացնել կրթական ծրագրերը և որոնց պարագայում առավել շահավետ կլինի կազմակերպել վերապատրաստման դասընթացներ։

ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի «գիտություն» հենասյան զարգացումը

Թեպետ ներկայում ՀՀ-ում նախատեսվում է գիտության ֆինանսավորման որոշակի աճ, այդուհանդերձ, նախ, այն բավարար չէ որակյալ գիտություն ունենալու համար, և, բացի այդ, կարծում ենք, որ հիպոթետիկ՝ որևէ ցուցանիշի վրա չհիմնված ֆինանսավորման ավելացումը չի կարող հուսալի տնտեսական աճի հիմք հանդիսանալ։ Այս տեսանկյունից հիմնվելով Թայվանի փորձի վրա՝ կարող ենք առաջարկել կապակցել գիտությանը տրամադրվող ֆինանսավորումը ՀՆԱ-ի հետ՝ ֆիքսելով ՀՆԱ-ի որոշակի տոկոս (Թայվանում զարգացման սկզբնական փուլում ՀՆԱ-ի 3 տոկոսն էր)։

Կարծում ենք, որ Հայաստանում գիտություն-պետություն խզված կապն էլ տնտեսական աճի ոչ արդյունավետ մոդելների ընտրության պատճառներից մեկն է։ Այդ տեսանկյունից Թայվանի օրինակով կարող ենք առաջարկել ՀՀ գիտահետազոտական կազմակերպությունների ֆինանսավորումը տրամադրել պետական պատվերի հիման վրա։ Յուրաքանչյուր նախարարություն պետք է աշխատի իր ոլորտի գիտահետազոտական կազմակերպությունների հետ՝ ապահովելով նախարարության կողմից կատարվող վերլուծությունների, մշակումների և կանխատեսումների գիտական հիմքը։ Այսպիսով՝ նախ գիտահետազոտական ինստիտուտները պարտավորված կլինեն իրականացնել պետությանն անհրաժեշտ գիտական մշակումներ և ապահովել գիտության վրա ծախսված գումարների հետգնում, և, բացի այդ, նախարարությունները կկարողանան իրենց կողմից մշակվող ռազմավարական ծրագրերի հիմքում ունենալ գիտական հիմնավորումներ։ Ընդ որում՝ ֆինանսական տեսանկյունից այստեղ կարող ենք առաջարկել 2 հնարավոր լուծում. Նախ՝ պետությունը կարող է բազային թեմաներից բացի լրացուցիչ ֆինանսավորում տրամադրել կոնկրետ գիտական կազմակերպությանը իր կողմից արդիական համարվող թեմայի վերլուծության համար։ Եվ բացի այդ, եթե վերլուծությունն իրականացվել է որևէ ոլորտի զարգացման նպատակով, ապա դրա հաջող իրականացումից հետո տվյալ ոլորտի զարգացման ցուցանիշ հանդիսացող (օրինակ՝ արտադրության, արտահանման, ավելացված արժեքի աճ և այլն) չափանիշի որոշակի տոկոսը տրամադրվի այդ զարգացման ծրագիրը մշակած գիտահետազոտական կազմակերպությանը։

Կարծում ենք՝ անհրաժեշտ է ստեղծել բազային և գրանտային հիմունքներով իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների կիրառելիությունը տնտեսությունում ստուգող խորհուրդ, որի մշտադիտարկման արդյունքների հիման վրա էլ կգնահատվի տվյալ վերլուծությունն իրականացրած գիտական խմբի հետագա ֆինանսավորման նպատակահարմարությունը: Այս սկզբունքից կարող են բացառություն կազմել միայն Հայաստանում նոր զարգացող գիտական մշակումների ոլորտները, որոնց հարակից տնտեսության ճյուղերը ՀՀ-ում դեռևս կա՛մ զարգացած չեն, կա՛մ դեռ գոյություն չունեն, որպեսզի կարողանան կիրառել ոլորտի գիտական նվաճումները: Այս պարագայում որպես գիտական արդյունք կդիտարկվի պատենտավորման ենթակա գիտական վերլուծության արդյունքի ստեղծումը:

Նորարարական տնտեսության զարգացում

Թայվանի տնտեսության օրինակով նորարարական մոդելի ներդրմանն ուղղված որոշակի առաջարկներ արդեն իսկ ներկայացրել ենք կրթական բարեփոխումների ներքո: Այդուհանդերձ, բացի կրթական ոլորտում նորարարության տարր ներմուծելուց, Թայվանի օրինակով Հայաստանում անհրաժեշտ է զարգացնել նաև տեխնոպարկերի մոդելը՝ դրանցում գրանցվելու և տրամադրվող բոլոր արտոնություններից օգտվելու առաջնայնությունը տալով այն կազմակերպություններին, որոնց առաջարկած տեխնոլոգիաներն արդեն իսկ անցել են մշակումների և փորձարկումների փուլը:

Արտահանման խթանման քաղաքականության

Բազմաթիվ երկրներ արտահանման խրախուսման կազմակերպություններ ստեղծել են որպես իրենց արտահանման ազգային ռազմավարությունների մի անհրաժեշտ ու անբաժանելի մաս[1]: Դրանց նպատակը հիմնականում պոտենցիալ արտահանողներին օժանդակելն է՝ իրենց ապրանքների համար շուկաներ գտնելու, ինչպես նաև միջազգային շուկայում պահանջարկ վայելող ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով[2]: Թայվանի փորձից ելնելով՝ կարող ենք ասել, որ ՀՀ արտահանման խրախուսման կազմակերպության գործունեությունը պետք է պարունակի հետևյալ գործառույթները. երկրի իմիջի կառուցում և երկրի բրենդի ստեղծում, արտահանմանն աջակցության համար տեխնիկական աջակցության տրամադրում, անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում, արտահանման խթանման նպատակով ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում գործող կազմակերպությունների գործունեության համակարգում, մարքեթինգային ծառայություններ, շուկայական հետազոտություններ և հրապարակումներ:

---

[1] Саргсян Л., Влияние экспорта на экономический рост в условиях либерализации торговли, Региональные проблемы преобразования экономики, N8 / 2018, стр.185-192

[2] Սարգսյան Լ., Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2019 թ., 320 էջ:

Ներդրումների ներգրավման խրախուսում

Ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից նախ և առաջ պետք է կարևորվի ներդրումների ներգրավման ռազմավարության մշակումը: Դրա բացակայությունն է հիմնական պատճառը, որ մինչ օրս ՀՀ-ում ներդրումների ներհոսքը կրում է տարերային և պատահական բնույթ, չունի որևէ հեռանկարային ուղղորդվածություն, չի տալիս ներդրողին որևէ պատկեր ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացումների տեսանկյունից[1]: Ռազմավարության թիրախները պետք է լինեն ներդրողի համար կանխատեսելիության ապահովումը, ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունների շեշտադրումը և թերությունների շտկման ուղիների առաջադրումը:

Թայվանի ներդրումային հարթակը լավագույններից է աշխարհում: Համանման մոդելով մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները:

Թայվանի օրինակով առաջարկում ենք ներդնել օտարերկրյա գործարարների հարցերին պատասխանող, ինչպես նաև օտարերկրյա գործարարների և պետական մարմինների միջև առաջացող խնդրահարույց իրավիճակների լուծմամբ զբաղվող «1 պատուհանի սկզբունք»՝ իր պաշտոնական կայքէջով, ինչպես նաև դրան կից էջերով linkedin և facebook սոցիալական հարթակներում[2]:

Գիտական նորույթը: Հիմք ընդունելով Թայվանի տնտեսական զարգացման 70-ամյա փորձի ուսումնասիրության արդյունքները և համադրելով դրանք ՀՀ–ում առկա հիմնախնդիրների հետ՝ առաջարկվել և հիմնավորվել է ՀՀ տնտեսության առաջանցիկ աճ ապահովող նոր մոդել՝ հետևյալ կառուցվածքով՝ ըստ առաջնահերթության. 1. կրթություն, 2. գիտություն, 3. նորարարություն, 4. արտահանում, 5. ներդրումներ: Յուրաքանչյուր ոլորտի համար առաջարկվում են այն բարեփոխումները, որոնք թույլ են տալիս լուծելու ՀՀ–ում առկա հիմնախնդիրները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Լ., Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2019 թ., 320 էջ

[1] Սարգսյան Լ. և ուրիշներ, Հայաստանի ներդրումները.մ արտահրավերներ, հնարավորություններ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 280-290:

[2] Սարգսյան Լ., Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը: Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում, գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, «Գիտություն» հրատ., 2019, էջ 226-246:

2. Սարգսյան Լ. և ուրիշներ, Հայաստանի ներդրումները. մարտահրավերներ, հնարավորություններ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., 320 էջ
3. Министерство иностранных дел Китайской Республики (Тайвань), Знакомьтесь: Тайвань 2020-2021, 2021, 48 стр.
4. Полякова Т., Эволюция фактора Тайваня в отношениях между США и КНР, Аналитические доклады (Является приложением к периодическому изданию «Ежегодник ИМИ»), Институт международных исследований МГИМО (У) МИД России. Выпуск 3 (42), июнь 2014, стр. 26
5. Саргсян Л., Влияние экспорта на экономический рост в условиях либерализации торговли. Региональные проблемы преобразования экономики, N8 / 2018, стр.185-192
6. Солонин К., Социальные “портреты” технологических предпринимателей на фоне инновационной экосистемы региона: Случай Тайваня, Центр исследований науки и техники ЕУСПб, 2012, стр. 11
7. Чэнь Цзя-вэй, Демократическая прогрессивная партия Тайваня и поставторитарная модернизация. Гл. 1. Рекомендовано к публикации Диссертационным советом Д 501.001.27 при МГУ имени М. В. Ломоносова 24 марта 2016 г., Иванов М., Экономическая политика государства на Тайване: 1949-2000 гг., Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук, 26 стр.
8. Chevalérias Ph., The Taiwanese Economy After the Miracle, An Industr y in Restructurati on, Structural Weaknesses and the Challenge o f China, China Perspectives 2010/3 | 2010 Taiwan: The Consolidation of a Democratic and Distinct Society, p. 35-44
9. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am)
10. https://cyberleninka.ru/article/n/osnovnye-etapy-modernizatsii-ekonomiki-tayvanya-problemy-i-dostizheniya/viewer
11. https://cyberleninka.ru/article/n/tayvan-ekonomicheskie-itogi-prezidentstva-chen-shuybyanya/viewer
12. https://eng.stat.gov.tw/mp.asp?mp=5
13. https://journals.openedition.org/chinaperspectives/5301
14. https://libs.ru/book/449831/ վերջին մուտքը՝ 08.08.2021թ.
15. https://taipanorama.tw/print.php?post=109193&unit=388 վերջին մուտքը՝ 07.08.2021
16. https://web.sipa.gov.tw/english/ParkBureauIntroduction
17. https://worldcompetitiveness.imd.org/rankings/wcy
18. https://www.stsp.gov.tw/web/WEB/Jsp/Page/cindex.jsp?frontTarget=ENGLISH&thisRootID=3
19. Ministry of Foreign Affairs, Republic of China (Taiwan) (mofa.gov.tw)

References

1. Sargsyan L., Nerdrowmneri nergravman & artahanman y'ndlaynman her'ankarnery' Hayastani Hanrapetowt'yownowm, HH GAA “Gitowt'yown” hrat., Er&an, 2019 t'., 320 e'j
2. Sargsyan L. & owrishner, Hayastani nerdrowmnery'. martahraverner, hnaravorowt'yownner, HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt, 2020 t'., 320e'j
3. Ministerstvo inostrannyh del Kitajskoj Respubliki (Tajvan'), Znakom'tes': TAJVAN'' 2020-2021, 2021, 48 str.
4. POLJaKOVA T., JeVOLJuCIJa FAKTORA TAJVANJa V OTNOShENIJaH MEZhDU SShA I KNR, ANALITIChESKIE DOKLADY (Javljaetsja prilozheniem k periodicheskomu izdaniju «Ezhegodnik IMI»), Institut mezhdunarodnyh issledovanij MGIMO (U) MID Rossii. Vypusk 3 (42), ijun' 2014, str. 26
5. Sargsjan L., Vlijanie jeksporta na jekonomicheskij rost v uslovijah liberalizacii torgovli. Regional'nye problemy preobrazovanija jekonomiki, N8 / 2018, str.185-192
6. Solonin K., Social'nye «portrety» tehnologicheskih predprinimatelej na fone innovacionnoj kosistemy regiona: SLUChAJ TAJVANJa, Centr issledovanij nauki i tehniki EUSPb, 2012, str. 11
7. Chjen' Czja-vjej, Demokraticheskaja progressivnaja partija Tajvanja i postavtoritarnaja modernizacija. Gl. 1. Rekomendovano k publikacii Dissertacionnym sovetom D 501.001.27 pri MGU imeni M. V. Lomonosova 24 marta 2016 g., Ivanov M., Jekonomicheskaja politika gosudarstva na Tajvane: 1949-2000 gg., Avtoreferat dissertacii na soiskanie uchenoj stepeni kandidata jekonomicheskih nauk, 26 str.
8. Chevalérias Ph., The Taiwanese Economy After the Miracle, An Industr y in Restructurati on, Structural Weaknesses and the Challenge o f China, China Perspectives 2010/3 | 2010 Taiwan: The Consolidation of a Democratic and Distinct Society, p. 35-44
9. www.armstat.am
10. https://cyberleninka.ru/article/n/osnovnye-etapy-modernizatsii-ekonomiki-tayvanya-problemy-i-dostizheniya/viewer
11. https://cyberleninka.ru/article/n/tayvan-ekonomicheskie-itogi-prezidentstva-chen-shuybyanya/viewer
12. https://eng.stat.gov.tw/mp.asp?mp=5
13. https://journals.openedition.org/chinaperspectives/5301
14. https://libs.ru/book/449831/
15. https://taipanorama.tw/print.php?post=109193&unit=388
16. https://web.sipa.gov.tw/english/ParkBureauIntroduction
17. https://worldcompetitiveness.imd.org/rankings/wcy
18. https://www.stsp.gov.tw/web/WEB/Jsp/Page/cindex.jsp?frontTarget=ENGLISH&thisRootID=3
19. Ministry of Foreign Affairs, Republic of China (Taiwan) (mofa.gov.tw)

ԹԱՅՎԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Համառոտագիր: Հայաստանի և Թայվանի տնտեսությունները ունեն բազմաթիվ նմանություններ ու տարբերություններ: Դիտարկելով Թայվանի տնտեսության զարգացումը 1960-ականներից մինչ օրս՝ կարող ենք փաստել, որ զարգացման բոլոր ժամանակահատվածներում Թայվանի տնտեսական քաղաքականությունը հստակ դասեր և պատգամներ է թողել զարգացող երկրների, մասնավորապես՝ Հայաստանի համար:

Հոդվածի նպատակն է՝ վեր հանել Թայվանի տնտեսության այն դասերը, որոնք կարող են ուսանելի լինել ՀՀ տնտեսության արագընթաց աճի համար: Այդ նպատակին հասնելու համար համադրվել են Թայվանի և Հայաստանի տնտեսությունների նմանություններն ու տարբերությունները, վերլուծվել են Թայվանի տնտեսական աճիո նպաստող գործոնները և կիրառվող գործիքակազմը, ներկայացվել են այո գործիքներն ու կառուցակարգերը, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում: Հոդվածի վերլուծության համար կիրառվել են տվյալների հավաքագրման, համադրման և վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, ինչպես նաև էկոնոմետրիկ վերլուծության մեթոդները:

Հոդվածի գիտական նորույթը. Հիմք ընդունելով Թայվանի տնտեսական զարգացման 70-ամյա փորձի ուսումնասիրության արդյունքները և համադրելով դրանք ՀՀ–ում առկա հիմնախնդիրների հետ՝ առաջարկվել և հիմնավորվել է ՀՀ տնտեսության առաջանցիկ աճ ապահովող նոր մոդել՝ հետևյալ կառուցվածքով՝ ըստ առաջնահերթության. 1. կրթություն, 2. գիտություն, 3. նորարարություն, 4. արտահանում, 5. ներդրումներ: Յուրաքանչյուր ոլորտի համար առաջարկվում են այն բարեփոխումները, որոնք թույլ են տալիս լուծելու ՀՀ–ում առկա հիմնախնդիրները: Մասնավորապես՝ կրթական բարեփոխումների համար մեր կողմից առաջարկվում է կրթական հաստատությունների ֆինանսավորման մոդելի փոփոխություն, նորարարական և ինժեներական լաբորատորիաների ներդրում ողջ հանրակրթական համակարգում և մասնագիտական պահանջարկի գնահատման հիման վրա բուհերում պետական պատվերով ուսուցման համար տեղերի հատկացում: Գիտության ոլորտի բարեփոխումների տեսանկյունից մենք առաջարկում ենք գիտության ֆինանսավորման կապակցում ՀՆԱ-ի ցուցանիշին, պետություն-գիտություն երկխոսության վերականգնում և գիտական վերլուծություններում կիրառական առաջարկությունները քննող պետական խորհրդի ստեղծում: Տնտեսության ոլորտային զարգացման տեսանկյունից առաջարկում ենք թեթև՝ տեքստիլ և սննդի, և ծանր արդյունաբերության՝ ռազմարդյունաբերության թիրախավորում: Նորարարության զարգացման համար առաջարկել ենք տեխնոպարկերի ցանցի ներդրում, արտահանման խթանման համար՝ արտահանման խրախուսման կազմակերպության հիմնում: Իսկ ներդրումների ներգրավման նպատակով առաջարկել ենք ներդրումների ներգրավման ռազմա-

վարության մշակում, ներդրումային հարթակի ստեղծում և «մեկ պատուհանի» սկզբունքի ներդրում:

Բանալի բառեր ՝«ասիական վիշապ», նորարարություն, բարձր տեխնոլոգիաներ, կրթության և գիտության բարեփոխում, տեխնոպարկ, արտահանման խթանում, ներդրումների ներգրավում

УРОКИ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ТАЙВАНЯ

ЛИЛИТ САРГСЯН

Аннотация: Экономики Армении и Тайваня имеют как общие, так и различные черты. Наблюдая за развитием экономики Тайваня с 1960-х годов по настоящее время, мы можем констатировать, что во все периоды развития экономическая политика Тайваня оставила конкретные уроки и предпосылки для развивающихся стран, особенно для Армении.

Целью данной статьи является выделение уроков тайваньской экономики, которые могут быть полезными для достижения быстрого экономического роста Армении. Для этого были сопоставлены сходства и различия между экономиками Тайваня и Армении, были проанализированы инструменты, используемые для содействия экономическому росту Тайваня, и были представлены те инструменты и структуры, которые могут быть локализованы в Армении. Для анализа статьи использовались методы сбора данных, анализа и синтеза, индукции-дедукции, а также эконометрического анализа.

Научная новизна статьи. На основе изучения 70-летнего опыта экономического развития Тайваня и его сопоставления с существующими проблемами в Республике Армения, была предложена и обоснована новая модель, обеспечивающая скоростепенный рост экономики Армении со следующей структурой: 1 – образование, 2 - наука, 3 -инновации, 4 -экспорт, 5 –инвестиции. А также были предложены реформы для каждой сферы, которые позволяют решить существующие проблемы в Республике Армения. В частности, для образовательных реформ мы предлагаем изменение модели финансирования образовательных учреждений, внедрение инновационных инженерных лабораторий во всей системе школьного образования, а также выделение мест для бюджетного обучения в университетах на основе оценки профессионального спроса. С точки зрения реформ в области науки мы предлагаем четко привязать финансирование науки с индексом ВВП, восстановить диалог между государством и наукой и создать государственный совет для рассмотрения наличии практических предложений в научных исследованиях. С точки зрения отраслевого развития экономики мы предлагаем таргетировать в области легкой промышленности - текстильную, пищевую промышленность, а в области тяжелой промышленности - военную промышленность. Для развития инноваций мы предложили создание сети технопарков, для продвижения экспорта - создание организации по продвижению экспорта. А для привлечения инвестиций мы предложили разработку стратегии привлечения инвестиций, создание инвестиционной площадки, внедрение принципа “одного окна”.

Ключевые слова: «Азиатский дракон», инновации, высокие технологии, реформа образования и науки, технопарк, продвижение экспорта, привлечение инвестиций

TAIWAN ECONOMIC POLICY LESSONS

LILIT SARGSYAN

Abstract: The economies of Armenia and Taiwan have both common and different features. Observing the development of Taiwan's economy from the 1960s to the present, we can state that in all periods of development, Taiwan's economic policy has left specific lessons and messages for developing countries, especially for Armenia.

The purpose of this article is to highlight the lessons of Taiwan's economy that can be useful in achieving rapid economic growth in Armenia. For this purpose, the similarities and differences between the economies of Taiwan and Armenia were compared, the instruments used to promote economic growth in Taiwan were analyzed, and those instruments and structures that could be localized in Armenia were presented. Methods of data collection, analysis and synthesis, induction-deduction, and econometric analysis were used in this analyis.

Scientific novelty of the article. Based on the results of the study of the 70-year experience of Taiwan's economic development and comparing it with the existing problems in the Republic of Armenia, a new model ensuring the progressive growth of the Armenian economy was substantiated, with the following structure: 1 - education, 2 - science, 3 - innovation, 4 - export, 5- investment. As well as the reforms are proposed for each sphere, which allow solving the existing problems in the Republic of Armenia. In particular, for educational reforms, we propose a change in the financing model of educational institutions, the introduction of innovative engineering laboratories throughout the school education system, as well as the allocation of places for budget education at universities based on estimation of professional demand. From the point of view of sectoral development of the economy, we propose to target the textile and food industries in the light industry, and the military industry in the heavy industry. For the development of innovation we have proposed the introduction of a network of technoparks, for the promotion of exports the establishment of an export promotion organization. And in order to attract investments, we have proposed the development of an investment attraction strategy, the creation of an investment platform, the introduction of the "one-window" principle.

Keywords: Asian dragon, innovation, high technology, education and science reform, technopark, export promotion, attraction of investment